21. 06. Սրուգիսան Ս՝ Ասատ

2022-2023 ուստարի .

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի 9-րդ <<բ>> դասարանի ղեկավարի

հաշվետվություն

Դասղեկ՝ Ս. Պողոսյան

1.2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից ղեկավարում եմ 9-րդ դասարանը՝

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
- Ամրացրել ենք փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ խորացրել ենք սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել ենք աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել ենք հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
- Կարևորել ենք անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Քաջալերել ենք աշակերտներին , խրախուսել նրանց ձեռքբերումները և շտկել բացթողումները:
- Կազմակերպել ենք ինքնազարգացման գործնական աշխատանքներ:
- Դասարանում ապահովել ենք խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպել ենք միջոցառումներ , էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանքներ:
- Ծնավորել ենք հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր, անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու:
- Կատարել դասալսումներ ,ծնողական ժողովներ,ուստարվա ընթացքում ամուր ենք պահել աշակերտ-ծնող-դպրոց կապը:

- Կատարվել են թեմատիկ դասղեկական ժամեր,լրացվել է կանոնավոր կերպով Դասղեկի մատյանը

9-րդ <<բ>> դասարանում սովորում են 19 աշակերտներ՝ 100 %առաջադիմություն ,որակը՝ 58 %:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների,մրցույթների, օլիմպիադաների, սպորտային մրցույթներին, ռազմահայրենասիրական միջոցառումներին, շաբաթօրյակներին: 9-րդ <<բ>> դասարանի աշակերտները ընդգրկված են եղել դպրոցի բոլոր միջոցառումներին և կազմակերպչական աշխատանքներին:

Սեպտեմբերին 9-րդ <<բ>> դասարանի մի շարք աշակերտներ մասնակցեցին <<Երեք սրբության զավակներ>> առցանց նախաձեռնությանը,ստացան հավաստագրեր:

Դասարանը դասղեկի հետ միասին անց է կացրել Վերջին Դաս միջոցառումը: Աշակերտները բարեհաջող հանձնել են ավարտական քննությունները և ավարտել հիմնական դպրոցը:

Դասարանը կազմակերպված է, համախմբված, ակտիվ և պատասխանատու :

Դասարանում տիրում է խաղաղ մթնոլորտ, չնայած երբեմն կան տարաձայնություններ, , որոնք ստանում են արագ լուծում:

Հուսանք, որ այլ ուսումնական հաստատություններում մեր սաները կարդարացնեն մեր սպասումները և իրենց կդրսևորեն լավագույնս: